*Շնորհաւորութիւններ Երուսաղէմի վերաքննիչ Ատեանի առած վճռին, յայտարարելով Պատրիարքարանի ընտրութեանց օրինաւորութիւնը։ Կ'աղօթենք վեհափառ Թագաւորի շուտափոյթ վաւերացման պահելու շահուած արդարութիւնը։ Յարգանօք։*

24 Հոկտ. 1957, Պաղտատ **Զգօն Տ. Վրդ.**

*Պատրիարքարանին ի նպաստ Դատական վճռին առուած լուրը ստացանք մեծ ուրախութեամբ։ Սրտագին շնորհաւորութիւններ Ձերդ Ամենապատուութեան և Միաբանութեան։ Կ'աղօթենք առ Բարձրեալն պարգևելու Ձեզ առողջութիւն, արեշատութիւն ի կատար ածելու Ձեր բարձր պաշտօնի պատասխանատուութիւնը որուն արժանի էք։ Եթէ Աստուած ի մեր կոյս է ո՞վ իցէ մեզ հակառակ։ Թող Աստուած անսասան և բարգաւաճ պահէ Հայաստանեայց Եկեղեցին և Պատրիարքարանը։*

23 Հոկտ. 1957, Լօս Անճելըս **Տիրայր Վարդապետ**

*Խորին շնորհակալութիւններ Ձեր երէկուայ ղրկած հեռագրին համար և սրտագին շնորհաւորութիւններ արդարութեան յաղթանակին համար։*

23 Հոկտ. 1957, Միլանօ **Հիւսիսեան**

*Սրտագին շնորհաւորութիւններ։*

22 Հոկտ. 1957, Պէյրութ **Տիկ. Սիրան Սեզա**

*Սրտագին շնորհաւորութիւններ։*

23 Հոկտ. 1957, Լոնտոն **Ճօրճ Պիւրճեան**

*Կը շնորհաւորենք արդարութեան յաղթանակը և կ'աղօթենք Ձերդ Ամենապատուութեան արեշատութեան։*

23 Հոկտ. 1957, Երիքով **Յովակիմ Մնացականեան**

---

## ՄԱՅՐ ԱԹՈՌ

### ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԴԻՒԱՆԱՏԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Առաջինը, սոյն թուականի Հոկտեմբերի 22ին, հետեւեալ ուղերձը յղեց Անթիլիաս, հեռագրաւ եւ յատուկ գրութեամբ:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Աթոռակալ

Ամենապատիւ Տ. Զարեհ Եպիսկոպոսին

Պէյրութ

Մենք, Վազգէն Առաջին, Կաթողիկոս Ամենայն Հայոց, տեղեկացած ըլլալով Հոկտեմբերի սկզբի մամուլի հաղորդումներէն Ձեր ընտրութեան մասին ամերիկահայ էջմիածնական թեմի շարք մը եկեղեցիներ Կիլիկեան Աթոռին իշխանութեան ներքեւ առնելու, Մեր վրդովումը եւ վիշտը կը յայտնենք այս աննախընթաց ոտնձգութեան եւ պատմականօրէն ըստեղծուած կանոններու եւ իրաւասութեանց սահմաններու խախտման համար:

Յանուն Հայաստանեայց Եկեղեցւոյ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ հայ հաւատացեալ ժողովուրդի այսու վճռապէս կը հրաւիրենք Ձեզ յետս կոչել Ձեր այդ ընտրութիւնը ի սէր Աստուծոյ եւ ազգի:

digitised by A.R.A.R.@

Հետեւողական Մեր խաղաղասիրական եւ միասնութեան ոգիին եւ վերջ տալու համար ներքին անիմաստ հերձումներուն եւ ազգակործան պառակտումներուն, միաժամանակ վերստին կ'առաջարկենք Ձեզ անյապաղ կերպով բանակցութիւններ սկսիլ որեւէ յարմար տեղ, վերականգնելու համար հոգեւոր միութիւնը եւ խաղաղութիւնը՝ մեր նախնեաց լոյս հաւատքով եւ դարերու հերոսական մաքառումներով ստեղծուած ու պահպանուած մեր Ս. Եկեղեցւոյ:

Կը սիրենք յուսալ որ Ձեր դրական պատասխանը պիտի ստանանք յառաջիկայ տասնեւհինգ օրերու ընթացքին: Եղբայրական սիրոյ ողջունիւ՝

ՎԱԶԳԷՆ Ա.
Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ի պատասխան սոյն Հայրապետական ուղերձին Նոյեմբեր 4ին առաւօտեան Մայր Աթոռում ստացուեց հետեւեալ հեռագիրը՝

Պէյրութից 2 Նոյեմբերի 1957 թ.

Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.

Էջմիածին

Կիլիկեան Կաթողիկոսութեան ուղղուած Ձեր Սրբութեան 22 Հոկտեմբերի հեռագիրը ստացուած է: Կը յայտնենք թէ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եպիսկոպոսական դասուն մէջ Զաւէն կամ Զարեհ անունով եպիսկոպոս գոյութիւն չունի: Կիլիկիոյ Աթոռը եղած է եւ կը մնայ նախանձախնդիր Հայ Եկեղեցւոյ եւ հայ ժողովուրդի միութեան եւ համերաշխութեան: Խոնարհ աղօթակից՝

Կաթողիկոսութեան Դիւան Եպիսկոպոս
ԱՐՏԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Վեհափառ Հայրապետը յատուկ կոնդակով, ուղղուած համայն հայ ժողովրդեան, պիտի ճշդէ Մայր Աթոռի դիրքը Անթիլիասի եւ նրա հակականոնական եւ եկեղեցաքանդ ընթացքի հանդէպ:

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

5 Նոյեմբերի 1957 թ.
Ս. Էջմիածին

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Սոյն Հոկտեմբերի 12–15ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցաւ Նորին Սուրբ Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա. Սրբազնագոյն Կաթողիկոսի Գահակալութեան երկրորդ տարեդարձի հանդիսութիւնը:

Վեհափառ Հայրապետի հրաւէրով, հանդիսութեան առթիւ ժամանել էին Մայր Աթոռ Համայն Վրաստանի Պատրիարք–Կաթողիկոս Նորին Սրբութիւն Տ. Տ. Մելքիսեդեկ Գ.ը, Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ Սրբազնագոյն Պատրիարք Նորին Սրբութիւն Ալեքսիի լիազօր ներկայացուցիչ Նորին Սրբազնութիւն Սերգի Եպիսկոպոսը, ինչպէս եւ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Մամբրէ Արքեպս. Գալֆայեանը, Հարաւային Ամերիկայի Հայրապետական Պատուիրակ Գերաշնորհ Տ. Սիոն Արքեպս. Մա-